

ՔԱՏԱ	ՉՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկար	յ համար
Տարե և	12 Ժր.
Վեցա ևայ	6 "
Արսասան անի հա-	
մար Տարեկան	15 "
Վեցամսայ	8 "
Անկերիկայի համար	
Տարեկան	3 ՏՐ.
Վեցամսայ	1.50 "
ԿԱՆԻՍԻՆ ԿՆՎԵԼԻ	

Իրանուզման տղը առաջին հրեային համար 40 սանթիկ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիկ է. երեքին անկերի անկերի համար 20 ՍՊ զեղը կըլլայ:

Վառնայի համար անոթի 10 սանթիկ

ՉԱՐԺՈՒՄԻ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿՐ ՂՐԱՏԱՐԱՆՈՒԹԻ ԶՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ

ՇԱՐՋՈՒՄԻ ԿՈՐ ԲԱԺԱՆՈՐԳԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻՍԻՆ ԿՆՎԵԼԻ

Իրանի եւ դրաւ դրիկէ
Խնդրարութեան հասցեի

Редакция на вѣстникъ

«Шаржумъ»

Варна

Redaction du journal

«Charjoum»

Varna (Bulgarie)


Իրոսիակէ եւ չեմ ճուտի

Արսասանանի անոթի

(20 ՍԱՆԹԻՄ)

Պուշկարիոյ համար անոթի

≤ 15 ՍԱՆԹԻՄ ≤



Պետրոս Արեւիկեան
29 տարեկան Պուշկարական սպայ

ԿՐԿԻՆ ԿԱՒԱՂԱՆ

Անդրիանապոլսի մէջ, կարմիր գաղանի հրամանով, բազմաթիւ թուրք հանդիսատեսները ներկայութեան, կախաղան են բարձրացրել Պետրոս Արեւիկեանին և Ռոզոտոսի քաջ Օննիկին:

Օննիկը նոր կոտուղ էր և իր գործունէութեան առաջին քայլում հերոսացաւ ու գնաց անպառնալի կերպով:

Բայց Արեւիկեան հին հերոս էր. «Վ չի յիշում Գրոշակի մէջ շատ անգամ յիշված հաշակատր «Խուլգարացին» Վասպուրականի հայդուկային սխրագործութիւնները հերոսներին մէկին:

Գրիչս չէ շարժվում գրել այդ ապատմաբան, անմահ ընկերոջ, գործիչի, Շարժումի եռանդոտ զուտ յեղափոխական տրամաբանութեամբ ու ոգով անվեհեր աշխատակցի մասին:

Կորուստը մեծ է. մարդկային սիրտը սեղմող, ուղեղը քարացնող և գրիչը անկարող ու անընդունակ է այդ կորուստի պատճառով վիշտը արտայայտելու իրողութիւնը. չոր, դառն,

սարսափելի իրողութիւնը այն է, որ հայ յեղափոխութիւնը մի քաջ ու միեւնոյն ժամանակ զարգացած մտքով անվեհեր զինուոր ևս կորցրեց:

Բազմաթիւ թուրքեր սպանած, շատ կռիւներէ ոչ ու առողջ գուրս պրծած աննկուն, մարտը ապստամբ Պետոն իր փայլուն խրոխտ կեանքի վերջը դտաւ թրքական անարգ կախաղանի վրա...

Վ. ԻՂՈ



ՊԵՏՈՆ ԵՒ ՕՆՆԻԿԸ ԿԱՒՈՒՄԸ

Քսան երեք տարիէ ի վեր է որ էտիրներցին հանդիսատես չէր ելլում այն տեսակ ահոնի տեսարաններու, եւ չէր ըմբռներ երբէք հայկական ներկայ դէպքերուն ահաւիրութիւնը. շատ մը քարոզներէ աւելի աղղեց այս տեսարանը, տմենէն քար սրտերն իսկ յուզուեցան և զղջացին տեսարանավարը գտնուելուն, քաջերու մահն իսկ շատ մը սրբտերու կեանք և զգացում տուաւ: Գաղանէն հասնող կէս գիշերանց մի Ֆէրմանին համաձայն երեկ հրապարակաւ «եղի ունեցաւ քաջ Օննիկին», երկու պուլկարներու և անմոռանալի Պետոնի կախուիլը պուլկարիացին կը ճանչնայ այն աղնի. հոգին և գիտելի թէ ինչ կարժէր անոր կեանքը. սակայն աւաղ որ էտիրներցի մահէն յետոյ իմացաւ ամեն ինչ և օրհնեցին նրան յիշատակը և աղնի

գործը. ըմբռնեց թէ ինչպէս այն աղնի հոգին իր այնքան փայլուն պաշտօնը, տեղը և ծնողքը թողած ու եկած էր աղնի գործին ծառայելու մրնչեա ինք էտիրներցին չէր ուզեր իր լոկ համակրութիւնն իսկ նուիրել գործին. տեսաւ թէ տաճկական գաղանութիւնը ինչ աստիճանի կը հասնէր:

Խուռն բազմութիւն մի ներկայ էր սեփարահատեղին. հայերէ եւ պուլկարներէն գրեթէ մէկը չկար «Ապաճըլար պաշը» «Պաթ բազար» «Սիւրբիւրկէճիլէր», և «Ետի Եօլ Աղլը կարեւոր հրապարակներն էին որոշուած տեղին. կանչած էին 2 պուլկար և 2 հայ քահանաներ սրբութիւն տալու համար: Պետոն վիճակուած էր Տէր Արսէն քահանան, որու ըստ է «կորսուէ անպիտան», հիմա միտքերնիդ եկաւ քովերնին գալու և վերջը գրպանը գտնուած ըստակները ազգասիրտներուց:

Շատ խիստ խոսեր է Օննիկը, իր խօսքը վերջացրեց որ խօսքերով, «մեզ պիտի կախէք այնպէս չէ», սակայն լաւ գիտցէք որ մենք անյոյս չենք մեռնիլ, մեր ետեւէն հաղարներ պիտի գան. առաջ պուլկարներն ալ կախցիք սակայն արդիւնքը Պուլկարիա մը վրայ տուրք և հիմա ալ Հայաստան մը վրայ պիտի տարք. ասոր հետ բաժ և իր մօտ գտնուող պահակ զինուորին ըսաւ «եկուք որ քեզ վերջին անգամ պագնեմ», որովհետեւ այսքան անձանց մէջ միայն դուն սիրտ ունիս»: Երկայ փաշաները մանաւանդ ոստիկան զինուորաց Մուհիս փաշան շան պէս կատղեցան և քանի մը անգամներ «հայտե տահա պիթմէտի մի պօռացին», տեսարանը ահաւիր էր, Տէրսչիին հարէմներն ալ ներկայ էին և կը քարկոծէին. ինչքերուն վրէժխնդրութիւնը հազեցած էր «օխ օխ սուս կեալուրս կը պօռային»:

Պուլկարները եւս խիստ աղղուկերպով հայհոյեցին Սուլթանէն սկսեալ մինչեւ Մէհմէտը. Հանգիստ և սոյն քաջ զինուոր-

ներու. թող յաւիտեան անմոռանալի մնայ անոնց յիշատակը և լոյս թող լուսուորէ անոնց գերեզմանը:

Շ.

Ատրիանուպոլիս 28 նոյ.

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Մուշ 5 Սեպտեմբեր

Սիրելի ընկեր

Առաջին նամակներովս, գիւղերու անբուժներն թրքացի, քրդաց և զօրաց ձեռքով ըլլալն ձեզ հաղորդեցի. այժմ այ դառնամ այդ անխիղճ խուժանի ու մեր հայդուկային խուժբերու մէջ տեղ պատահած անհաւասար նշանաւոր մէկ երկու ընդհարումներն թուելու:

Մոկուք զիւզի դէպքը պատահելէ ու բաւական ժամանակ անցնելէ յետոյ, Ալվառնիճի յաջող դէպքը ևս վրայ եկաւ, այդ յաջողութիւնը խուժբեր հազար և մէկ մտածմանց մէջ ձգեց. գիտնալով որ կառավարութիւնը, այդ անպատուութիւնը չի պիտի տանէ, այլ հետամտելով միջոցներ ձեռք առնելով պիտի հարուածէ ընդ միշտ. ատոր ստաջք առնելու, ու ևս առաւել կտտավարութիւնը՝ դժուարութեան մէջ ձգելու համար, օրին մէկ Մոկուք գիւղի վերեւ գտնուած անառիկ ձորին մէջ, կրկին յեղի խուժբեր ի մի հաւաքուելով խորհրդակցութեան մէջ կը մտնեն, իրենց գործողութեանց ուղղութիւն ու գալիք անպատեհութեանց առաջին առնելու որոշում մը տալու:

Այդ կնճուտ ու ծանր խնդրոյն առջեւ խորատուցուած խմբակն, գեռ ևս իւր վերջինը որոշման վճիւն չը տուած, իրենց ընկերներէն Հատտորիկ գիւղացի երիտասարդ մը, որ երկու տարիներէ ի վեր անձուիրաբար կը կոտէր, չենք գիտեր թէ ինչ բանէ թեղադրեալ, ինքզինք

ՆԵՐԿԱՅԱՅՈՒՄԸ

մէջ նետելով, խումբէն 2 օսման-
եան լիրա կը պահանջէ, և մի-
անգամայն կսպառնայ ըսելով թէ՛
եթէ չը տրուի, ինքն այլ ևս
ընդ միշտ պիտի հրաժարի խում-
բի հետ ընկերակցելէ:

Խումբը՝ որ տարբեր և ամե-
նակարեւոր խնդրոյ մը համար
հաւաքուած էր խորհրդակցելու,
անսկզիւ և անակնկալ առարկու-
թիւն մը երբ իրենց ընկերէն
կը լսէ, կը շուարի և միանգա-
մայն կը զարմանայ այդ տեսակ
անպատեհ առարկութեան վրայ,
ու կը սկսի համոզել իրենց ընկե-
րով ցոյց տալով ներկայ անտու-
նելի վիճակի մէջ գտնուող հայ-
րենիքի պահանջքն, ու իրենց
աննշան ուժն և այդ պատճառաւ
ալ այդ տեսակ պահանջ մ'է խում-
բի մէջ գտնուած ընկերներէ ըլ-
լուիլն չա՛տ և շատ ծանր կը
թուի իրենց, քանի որ երկու
ոսկիով կրնար առնուիլ հրացան
մը ևս ընկեր մըն ալ իրենց թուի
վրայ աւելցնելով:

Խումբը՝ որքան որ կաշխատի
համոզելու թէ՛ այդ տեսակ պա-
հանջէ մը յետո մնայ: Բայց ան-
կարելի կը լլայ, հարկադրուած
կը խօստանայ այդ երիտասարդին
յոհացում տալ, բայց քանի մը
օր ետքը, իրենց առջեւ բաց-
ուած ու խոչնդոտ դարձած մէկ
երկու ստիպողական խնդիրներն
կարգադրելէ յետոյ:

Բայց այդ երիտասարդը՝ մատ-
նութեան ժամը եկած հասած
նկատելով, վրայի զէնքերն խմ-
բայետին յանձնելով կը հեռա-
նայ, իսկ խումբը՝ իւր տուած ու-
րոշման վրայ անդրդուելի մնա-
լով, և միանգամայն այն համոզ-
ման ըլլալով որ, իրենց ընկերը
քանի ժամէն յետոյ պիտի վերա-
դառնայ իրենց, ինչպէս որ ա-
մէն անգամներ կառավարութեան
անցողարձն լրտեսելու համար
խումբի տղաքներէն, Մշոյ և
դաշտի գիւղերն կիջնեն տեղե-
կութիւններ հաւաքելու, որպէս-
զի ըստ այնմ շարժին, ատոր
հեռացումն ալ այդ կարգէն նկա-
տելով, երբէք ու է կասկած մը
առաջ չի գար մեջներին:

Շարքի սպաննում, Ալվա-
ռինճի դէպքն ու յեղ. անցու-
դարձն կառավարութեան շիւա-
րեցուցում էր. ինչ ընելիքներն
չէին գիտեր, ամեն տեսակ ստոր
միջոցներ ձեռք առած, հետա-
մուտ էին գիտնալ, թէ ի՞նչ ան-
ցողարձքներ կը կատարուին
Մշոյ դաշտի հայ ժողովրդեան
մէջ, որպէսզի ըստ այնմ միջոց-
ներ ձեռք քանցելով վարէին:

(Շարունակելի)

Ֆիլիպպի թատերասէր երի-
տասարդութեան աս տարուան
առաջին ներկայացումը—Խենթը
տեղի ունեցաւ նոյեմբեր 24 շա-
բաթ իրիկուն «Լիւքսէնպուրկ»
թատրոնը, ուր հեաաքքերնե-
րու խումբն բազմութիւն մը փու-
թացած էր ներկայ գտնուիլ:

Յաջորդ յօդուածի մը ձգելով
թատերասէր երիտասարդնէրու
պարբերական աս ձերնարկին
միջնութեան և օգտակար կող-
մը մասնանշել և անոր յարակից
մէկ երկու նկատողութիւններ ը-
նել, աս անգամ կուգամ ներկա-
յացման վրայ խօսիլ միայն:

Վեց արարուածներու մէջ մի-
փոփոխուած էր «խենթին» այն
կարեւոր կտորները՝ զորս կարե-
լի էր ներմուծել պիէսին մէջ:

Ներկայացուեցաւ տանուտէր
Խաչօի սենեակը, ուր հարսները
կաշխատէին լուռ, Ստեփանիկի,
տանուտէրի և որդիներուն ուրա-
խութիւնը Ապօի քաջութեան
պատճառով, Ֆաթիմահ պէկի այ-
ցելութիւնը, պէկին կնոջ՝ Խում-
բիտ հանձմի աղախին Ջաւօի գա-
լը և Ստեփանիկին սպառնացող
վտանգն ու հանձմին պատուէրը
Սառահին իմացնելը, Թովմաս Է-
ֆէնտիլի, Վարդանի և Սալմանի
այցելութիւնը, զինաբաշխ կեղծ
կազ շէրշի Մելիք—Մանսուրի
տեսակցութիւնը Սալմանի հետ,
Թովմաս Էֆէնտիլի մատուցութիւնը,
տանը խուզարկութիւնը, Վար-
դանի ծուղակը իյնալը և Մելիք—
Մանսուրի, Սաքօի ու Եղօի ձեռ-
քով ճարպիկօրէն սարքուած
կարգով մը անոր ազատուիլը:

Ներկայացուեցաւ տանուտէր
Խաչօի օճախը քարուքանդ ու ա-
ւերակ, Վարդան հոն ներկայու-
թիւնն ու դառնութեամբ խօսիլը,
Հիւր Տօփիլին յայտնուիլը:

Վերջի արարուածը կը ներկա-
յացնէր Վաղարշապատի փողոցին
մէջ Լալաին սիրտ ծակող խեղ-
ճութիւնը՝ Սառահն երկու պղտիկ
ապոց հետ, Աքեղաներու պտու-
տաութիւնը, էջմիածնայ խու-
ցին մէջ Լալաի ծանր հիւանդու-
թիւնը, զառանցանքները, մա-
հը, և վերջապէս՝ Վարդանի
յայտնուիլն ու քարացած գետին
փռուիլը:

Իսկ կենդա ի պատկերով մըն
ալ Վարդանի երազը պատ երա-
ցաւ շատ գեղեցիկ ու յաջող կեր-
պով:

Դերակատարները, խաղը առ
հասարակ, խիստ յաջող դուրս
եկան:

Ճանուտէր Խաչօն փոկապէս ա-
լեղարդ հօր մը, լուրջ ձերի մը
տիպը արտայայտեց սկիզբէն
մինչև վերջ այնքան բնական:

Թովմաս Էֆէնտիլին՝ ճարպիկօրէն
յաջողեցաւ պատկերացնել բուն
Թովմաս Էֆէնտիլին իր ազտու
տիպով, այնպէս որ, հակառակ
հակառակ զինքը ունկնդրող
բազմութեան զգուանքին, չը
կրցան միեւնոյն ատեն զսպել ի-
րենց խնդուկը: Վարդանը յա-
ջողեցաւ յարմարիլ Բաֆֆիի նը-
կայարարած Վարդանին—մերթ
հեղեղ ու արհամարող, մերթ
զուարթ ու բարկացող: Շատ
զուարթ տպաւորութիւն մը թո-
ղուց Մելիք—Մանսուրը իր կազ
վիճակին մէջ, ուր առած հրա-
ցանի սնտուկը, իսկ ճարպիկ
կառողի դիրքով ալ մեծ ոգեւո-
րութիւն առաջ բերու: Վերջա-
պէս Սալմանը, իննսպետը,
քուրտ պէկը, Տօքթօրը, Սաքօն
ու Եղօն, բոլոր գերակատարները
մէկ խօսքով յաջող էին:

Օրիորդները—օ՛ տանուտէր հիւ-
ցուցին ներկաները և յաջողեցան
նոյնիսկ արցունքներ խլել:

Մարօ և Նազլու տանուտէրին
հարսները, գաւառի հարսները
պատկերացուցին, Ջաւօն ներ-
կայացուց բուն իսկ քրդուհի մը
իր պարզամտութեամբն ու ձեւերու
վը հաճելի, որ ծիծաղեցուց
հանդիսականները:

Սառահն իր դերին տէրն էր
սկիզբէն մինչև վերջ. նախա-
պէս մեծ հարսի մը լուրջ ձեւե-
րովը, իսկ էջմիածնայ խուցին
մէջ, լալաի անկողնին քով գո-
րովալից մօր մը խանդաղատան-
քը ստեղծեց, իր միակ երջան-
կութիւնը, հանդիսաբ՝ Լալային
կամքը կատարելն էր: Լալան իր
պատանիի զգեստով, իր հաճելի
տղայամասութեամբը թողուցած
զուարթ տպաւորութիւնը հկա-
ցուել և անոր տեղ դնել տրի-
բութի նը, արցունքը: Իր դժ-
բախտութեան մէջ, իր վերջին
վայրկեաններուն ատեն մանա-
ւանդ, այնքան ազդու, այնքան
յուզիչ կատարեց իր դերը որ ա-
մենէն անտարբերներն անգամ
արտատուեցին: Առաջին անգա-
մով Լալաին գերը կատարող այս
օրիորդին հիանալի յաջողութիւ-
նը, թերեւս չի կրնար ունենալ
ու է գերասանուհի մը իր առա-
ջին տարիներուն մէջ: Ոչ Լալաին
թշուառութիւնը, ոչ անոր զա-
ռանցանքները, ոչ ալ Սառահին
տրձակած աղեխարշ ճիւղը Լալաի
մնած պահուն՝ կարելի չէ նկա-
րագրել, տպաւորութիւնը զոր
ունեցաւ ունկնդիրը, ան միայն
կրնայ բմբռնել, ու ատ ալ կը
բաւէ:

Ամենէն դժուարահաճերն ան-
գամ զո՛հ սրտով մեկնեցան փա-
փաք յայտնելով ուրիշ ներկայա-
ցումներ ալ տրուելուն:

Բազմութիւնը գոհացուցիչ էր,
աչքի առջեւ ունենալով նաեւ
այն պարագան, որ անկեղծապէս

խստութունինք Աղբառախնամի
անդամներէն ոմանք, պէտք ե-
ղած փութկոտութիւնը չունեցան
տոմակները ծախելու մասին,
երբ ութօր առաջ արդէն պատ-
րաստուած էր տոմակները:

Եւ ըսինք նաեւ որ, երգեցիկ
և թատերասէր խումբի անգամ-
ներու ջանքերուն շնորհիւն էր
որ գործը այսքան ալ գլուխ ելաւ
անոնք նոյնիսկ տոմակներու ըս-
պառման ալ աշխատեցան: Ու և-
թէ թատերասէր խումբը չէ տու-
ած, չեմ յուսար թէ—հակառակ
իր յուսացածին—մեծ բան մըն
ալ մնացած ըլլալ խումբին, ո-
րովհետեւ ըստէն վեր բոլոր ծախ-
քերը գրեթէ թատերասէր խում-
բը իրօրան առեր է, որուն գու-
մարը 100 լէվը կանցնի, մինչ-
դեռ խումբին վճարուելիքը 150
լէվը չանցնի:

ՀՐԱՆ-ԺԻՐԱՅԻՐ

26 նոյ. Ֆիլիպպ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ազնիւ ազգայիններ:

Շուրջ երեք տարիներէ ի վեր
քաղաքին յարգոյ ազգայնոց ցոյց
տուած նախանձախնդիր, ողին ու
չերժ համակրանքը՝ դէպի ազ-
գային վտարարանն ու սոհմային
դաստիարակութիւնը, կը քաջա-
լերեն թաղական խորհուրդս, որ
համարձակօրէն ներկայիւս կու-
գայ պարզել ազգային այս հառ-
տատութեան արդի վիճակն, որ
օգնութեան կը կարօտի այժմ
առաւել քան երբէք:

Մեծ պարծանք մը ու փառք
մըն է, արդարեւ Գոնսթանցա-
բնակ հայերու համար, որ տո-
կալով ամէն դժուարութեանց,
բարձրացուցին յարակից մեր
Ս. Եկեղեցւոյն հայկազեան երկ-
սեռ վարժարանն, որ տարուէ
տարի իր ցոյց տուած յառաջդի-
մութիւնովը, այսօր իր երկուս
հայ աշակերտաց թիւը յաջողած
է բարձրացնել մինչև հարիւր:

Թաղ. խորհուրդս, ջերմապէս
համոզուած ըլլալով ազգային
պատիարակութեան և ուսման
լեզուին ուսուցման աւագ կարե-
ւորութիւնը՝ մի՛ր ապագայ սե-
րունդին տեւականութեան ու յա-
ջողութեանը մասին, առանց ի
նկատի առնելու ազգային ու է
հաստատուն եկամուտի մը չղո-
յութիւնն ու վարժարանին ար-
դէն իսկ նիւթական աննախան-
ձելի վիճակը, համարձակութիւնը
ունեցաւ պաշտօնի կոչել չորս ու-
սուցիչներ ներկայ 1901—1902
չրվանին համար, որոց ամսական
վճարումներուն վրայ աւելցնելով
Ս. Եկեղեցւոյ և վարժարանին յա-
րակից ծախքերն, կունենայ ամ-

սակահն 500—600 Ֆր. ծախք մը : Արգ թաղական խորհուրդս Եկատերով թէ յարգոյ ազգայնոց և թէ խորհրդոյս տաճած մեծ փափաքն ու սէրը՝ դէպի ազգային մանկատան դատարար կու թիւնը :

Եկատերով վարժարանին ներկայ դրութիւնը պահպանելու և յարատեւելու նիւթական մեծ անձկութիւնն ու չքաւորութիւնը :

Եկատերով ուսուցչական մարմնոյն ամակալներուն երեք չորս ամիսներէ ի վեր անվճար մնացած ըլլալը, ու անձնութեան իրենց գնահատելի աշխատութիւնը :

Որոշեց յառաջիկայ դեկտեմբ. ամսոյ մէջ հանգանակութեան մը ձեռնարկել, որուն համար, և ոչ կրնէ քաղաքիս ազգային մեծապատիւ Տ. Տ. վաճառականներու, պաշտօնատարներու, խանութպաններու, արհեստարներու և մեր պանդուխտ եղբայրներու ազգասէր ոգւոյն, որպէս զի հաճին, ըստ մեր նախնի ալիքային հաճանդովեանց, իրենց լիատուալ դրամական նուէրներով օգնելու օժանդակելու մեր միակ պարծանքն ու միջնորդութիւնը և զոչ այս նուիրական հաստատութեան :

Յայտենելով, կանխաւ մեր խորին շնորհակալութիւնը՝ յանուն հարիւր երկուսու ուսանող հայ մանկուոյն : Ի դիմաց թաղ խորհրդոյն Ատենապետ Ատենապետ Մ. Ալիբեկեան Եղիա Գրիգորեան Գծնութանց 30 նոյ.

Իրաւունքի խնդիր Յ. Գուրպիւրեանին 2. Եկոֆիի Հուզուզի մեծ հրատարակած առաջնորդող յօդուածին քարոզակնութիւնը

Հուզուզ թիւ 2 ՅԱՒԵԼՈՒ ԱՐԺԱՆԻ ՎԻՃԱԿՆԵՍ

Մեր նախահայրերը մարդկութեան մէջ իրաւամբ կը պարծենային որ իրենք աշխարհիս երեսը օսման ազգին կը պատկանին :

«Որովհետեւ աշխարհիս երեսը հին կոյճերը օսմանեան թագաւորութիւնը իր ուժով ուրիշ թաղաւորներու հանդէպ անմիջելի գերք մը ստեղծած ըլլալով աշխարհիս ամենէն բնորոշ գործակ և ամենէն աւելի բարեբեր կէտերը իր ամբարներն մէջը առած և օտար վեհապետները օսմանեան բարձր և փառապանք գահուն ծայրերուն տակ կծկտելու հարկադրած էր :

Բայց այսօր ամբարն որ քսան տարիէն ի վեր է օսմանեան կառավարութեան անունը, փառք և կազմակերպութիւնը տարուէ տարի կը յետադիմէ, և կտրիճ օսմանցիներուն կարմիր արեանը շփոթարէն անուած երկիրներուն (ստացուածքներուն) մէկ շատ տեղերը օտար տղերուն տրուե-

ցան և տրուելու վրայ են» այսօր օսմանեան ստացուածքներ ըսածնիս յիսուն տարի առաջուան օսմանեան երկիրներուն կէտը ըսել է եւ եթէ այս ցաւալի կացութիւնը այսպէս շարունակելու ըլլանքէ Սաստուած մի արասցէ օրէ օր յետադիմելու վրայ ենք, և Պօլսոյ լրագրութիւնը իրենց բռնած ընթացքին վերաբերմամբ ազգին եւ կառավարութեան ներկայ ցաւալի վիճակները հրապարակելու և այս արգահատելի ճանապարհէն դուրսիս ազատելու համար մէկ միջոց մը ցուցնել աշխատելու անդ ժողովուրդը ալ աւելի խոր քուէն ենթարկելով, կաշառակեր պաշտօնէջից ատրիճան մը եւս պետութեան և ազգին երակները շորջուելուն միջոցներ և դիւրութիւններ տարու վրայ է :

Այս վերջի յունական պատերազմը եւս այսպիսի անբարխտներուն շարակամութեանցը մէկ դիրքն ճամբայ մը բացաւ, անանկ որ Դեռայից մէջ յունական բանակի վրայ տարած յաղթութիւնը իբր թէ մեծ յաջողութիւն մը ձեռք բերածի պէս ըմբռնելով ըլլալով և բարձրագոյնիս հը պարտութիւն մը վաւարելուց ցած ցուցնելու կաշխատին : Անօթ թէ ամօթ. ա մը ըլլէ՞ք մէկուսիւսին կազմէկ ազուէսի վրայ տարած յաղթութեան համար այդ աստիճան ազուէկ հանել օսմանեան ազգութեան հոմբաւին միաս յառաջ բերելէ :

Ըրայ որ ամբարն յոյներուն աղթած ըլլալու համար պարծենալու իրաւունք ունենանք բայց թափուած արեան փոխարէն ի՞նչ շահ առաջ եկող է : Կարև հրատարակուելն մինչեւ այսօրս թշնամիի գնդակէն, անօթութիւնէն և մերկութիւնէն և հիւանդութիւնէն 50,000էն աւելի օսմանցի կոտորուած է :

Իսկ Յունաստանի վեար անոր կէսը անգամ չէ եղած. թափուած անմեղ արիւններու փոխարէն յաղթութեամբ առնուած Դեռայից նահանգը նորէն յոյներուն ետ դարձրելու կազմուած դաշնագրիները կը տրամագրեն, և անուիրող որոշուած շորս միջինն ոսկի պատերազմական տուգանքը եւս պատերազմի ծախուց կէսը անգամ չի կրնալ վճարել նմանապէս կոտորուող զինուորներու որբ զաւակներուն աչքի մնացած կիներուն և բնտանեաց անդամներուն կրած թշուառութիւնները նկարագրել անկարելի ըլլալով հանդերձ անոնց լայր ու կոճը երկիրները կը դողդոջեն կոր. ահաւասիկ մեր մարտիրոսներուն յաղթութեանէն առաջ եկած օգուտը այս եղած է, այս վիճակին մէջ մենք ալ Պօլսոյ լրագրագրութիւններուն հետ ապրին ըլլալով մարդիկները ապրին նախարարաց խորհուրդը և թէ՛ճիկ փաշան ըսելով պոռաւու ենք, ԲԱՅՑ ՄԻԻՍ ԿՈՂՄԷՆ ԵՐԿԻՐԸ ԵՒ ԱԶԳԸ ՁԵՒՔԷ ԿԵՐԹԱՅ ԿՈՐ :

2. ԵՒՖԻԻ()

Այս 2. ԵՒՖԻԻ Յակոբ Գուրպիւրեանին է, Իրաւունքի խնդիրը : Ծակատարներ խաղով կարծեն, Շարժումի նոյն համարի մէջ, որ յայտարարվում է Սիրիմեանի ֆիզիքական մահը, թրքական կախաղանի վրայ, սպազորում է և թրքասիրտ Գուրպիւրեան 2. ԵՒՖԻԻ Հուզուզի մէջ մէջ զրած առաջնորդողը : Անշուշտ ժողովուրդը լաւ իշոււմ է թէ Գուրպիւրեան իր Իրաւունքի մէջ ինչ անպատկառ լեզու գործածեց միջուկի անգուզական հերսի հասցիին :

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՀԱՅ ՀԱՐ. ԻՍՆԵՐՈՒՆ

«Մասիս» իր վերջին թիւի Յունաստանի մէջ լուր մը կը գնէ, որ իր պարզ ու աննշան ձեռն տակ ահաւոր բան մը ունի որ արիւնշարցունքային թշուառութեան մը չը վերջացող ու անդադարձիկ պատմութիւնն է :

Նպաստից յանձնաժողովը իր կարգաթիւի օրուան նիստին մէջ երկարօրէն խորհրդակցեցաւ իր հաշտական գործերուն վրայ : Շատ որոշունքներ բարեբարներու որոշեալ քանակութեամբ առուած նպաստով բացուած են : Այդ նպաստները զաղրած են հիմա», պարտաբարտան ալ միջոց չունի օգնելու անոնց կանգուն մնալուն համար, և այս ճամբան խտտութեանց մէջ այդ որբանոցներն ալ փակելի դուրսի գործ չէ : Ի՞նչ Ենելու է, ոչ բայց կրնան մնալ, ոչ ալ փակ : Վանէն տեղեկութիւն կուտան թէ հակառակ տեղեցին մէջ գտնուած մէկ քանի որբանոցներուն րատական թուով շարժիկ աղջիկներն փողոցները կը զիջեն. եթէ միս որբերն ալ գուրս հանուին, ուր զիջեն և ի՞նչպէս խնամուին :

Այս տեսակ լուր մը, որիչ ու է ազգի մէջ, օրինակի համար յունաց մէջ, ահազին իրարանցում առաջ պիտի բերէր. հարուստներ իրարուն պիտի երկնցունէին օգնու թիւները. և ի թիւթէլակին, փողոցներուն մէջ թափառող աղջիկները պիտի ժողովէին, պատուաբարութիւն, սնուցուէին և ի չգոյէ նպատակ փակման սպառնալիքին տակ ճնշուող որբանոցները նոր զարկ ու փայլ պիտի վերտառնային :

Եւ մինչդեռ անդին, Հայաստանի չորս անկիւնները հայ մանուկը սոված կը հեծէ, որկրութիւնը կը շրջարթի փողոցներու զիջեալին ա մայրութեանց մէջ, մինչդեռ փոքրիկ հայուհին, որ մեր ապագայ սերնդեան մայրութիւնը անձնու որբութեան կոչուած է, մերկ րոպիկ, անօթի, կիսամուկ կը սքայ ինչուստու թեան ասամիներուն մէջ, մինչդեռ նպաստի աղբիւրներուն աստիճանական գործողութիւնը ունեցող որբանոցներուն տեսողութիւնը կը վառագէ՛ անոնց մէջ պատուաբարութիւնը րոտանկարի ազաւքը փողոց թափելու ոպոստալիքով, հոս, որտասանմանի մէջ, Բարիդի բարայատակին վրայ մեր հարուստները հազարաւոր ոսկիներ կը թափեն փարթմարէն, ժամ կը շինեն, օտարին ոչքին աւճեւ հայ ազգին վարկը բարձրացնելու պատրական եւ ունայն մտահոգութիւնները :

Այս առաջնորդող յօդուածը գրողը նոյն անձն է որ ինքզինքը ժողովրդին առջեւ հայրենասէր ներկայացնելով, ամենաաղոտու գրպարտութիւններով մրտակու կը յանգանէր Պետոի նման անձնուրացները :

Սա մի ճակտագրական զուգարկույում է, որով հայ ժողովուրդը պիտի է լաւ բնութի Գուրպիւրեաններին եւ Պետոների արարելութիւնը : Պետոները կախաղան են բարձրանում հայրենիքի ազատութեան համար թուքբի ձեռքով իսկ Գուրպիւրեանները թրքաստանով թիւրքերի անկման վրա են ողբում :

ԽՄԲ.

թեւէն մղուած : Գանի որ այդ սակիները անպատճառ ու է բանի մը պիտի յատկացուէին, անհերքելիօրէն մեր որբերն էին որ պէտք էին օգուտել անոնցմէ : Օղին, ոչնչու թեան նետուած այդ կարգի դուժարներ՝ եթէ յաւելւորէն պիտի խուսափին ծառայելու մեր փրկութեան միակ ստատարին՝ զէնքին հայթայթմանը, զոնէ, գիտութեան տարրական ըմբռնում մը մղուած, անոնք շիք շիտակ մեր անթիւ որբերուն ապրուտին յատկացուելու էին :

Ձրկելով զանոնք այդ իրաւունքէն պատերու, զիբէթներու, խորաններու, բիրտ ու անպէտ նիւթականութեանը վերածելով հայ հէք որբուհին կեանքը ապրեցնելիք լուծանի ինծի համար ամենէն անյուր, հրէշային ոճիրներէն մէկը գործուած կը լլայ :

Արտասանմանի հայ հարուստներ, մեր ազգին ապագայ մարդերը հեռուն, հայրենիքի շառագոյն գոգին մէջ, զլլակներով ծածկուած, գողահար, անօթի ծարաւ, կը պտտին թափառական. մեր ազգին ապագայ հայրերը, անտրուան պատանիներ, որբանոցներու մէջ հազու պատուաբարութեամբ, հասնող ձմեռուան անգիթութեանը զոհ երթալու անկող վրտանդին մօտ կը գտնուին : Ի՞նչպէս սիրա կընէք, այս ցաւազիտօրէն թեւազրական տեսարանին առջեւ, անկարելի, անարթ հանդիսատեսի կեցուածքին մէջ արձանաւալ, ուրեմն այն աստիճան փնջած ազգ մըն ենք որ մեզ կարկառուած վախազօս, մինչնիկ թեւերու սքոսասարուտ կարկամիլը դիտենք. անգաւծարէն, ու անօթութեան պատրած ձայնով մեզ ուղղուած սրտածմիկ աղբիւրներուն պղտոտական լուծութեամբ մը պատախասենք :

Եւ յետոյ աններելի և անթրքանէ որ հայ որբութեան հնգամայ տաժանալին ու մեծաղբոյն անողութեան և ազգը, գեռ լրագրութիւնը անոր ի նպաստ թեւազրու թիւները ընելու դժեղակ հարկին մէջ գտնուելի, դեռ ստիպուել հայ որբերը անթութիւնէ մեռնելէ արգիլելու համար՝ ցաւազին անթրքաններու դիմել : Անիկայ անուր բան է, ու պերագանցօրէն ցոյց կուտայ մեր երկթապէս կարող դասակարգին օրտի ու իսկի բացարձակ ամայութիւնը, այլասերութիւն երկի զալի ախտանշաններով :

Վերջապէս անհանդուրժելի բան է որ երբ մանուկներու ամբողջ լէզուններն անօթի կը փճանան, մարդ երթալ պարկերով ոսկի քարերու եւ փայտերու զեղարուեստական կազմակերպութիւն յատկացնէ. և յետոյ Աստուած երբէք չի ներէր որ այս սիրուր պայմաններուն տակ իրեն համար առու կատուցուի, և հոն բարեպաշտներ երթան իրեն աղօթելու և կը կարծեմ որ Աստուած արտաբանակ բարեպաշտութիւններ երբէք չի վարձարեր : Իսկ, արգաբացումի համար եթէ մէջ պիտ բերուին արժանապատուութիւն, օտարին առջեւ ազգային «բեկիթի» բարձրացման սնուտի պատուականները, այս բնագանակական վարկածին և անօթութեան ահաւոր իրողութեան միջեւ ընարուիքի վարանումը ունեցողն իսկ ինծի համար անկարելի ու անպուշ շոշորգ մըն է պարզապէս :

Հիմակ, ինչպիսիք իր շար ու ան-
 սեթեւեթ ահաւորութեանը մէջ սա-
 է. Հայաստանի այն շորանոցները,
 որոնք մեր հարուստներուն նպաստ-
 ներովը կը յանձանձուէին, պիտի
 փակուին չեղեր, վասնզի վերոյիշեալ
 հարուստները հետզհետէ դադար են
 նպաստ հասցնելէ չքաւորութեան այդ
 սգալի պատարաններուն: Եւ յի-
 տոյ, զեռ դուրսը մնացած հայ փոքր
 աղջիկներ կան եղեր, որոնք՝ անօթի
 ու մերկ՝ փողոցներուն մէջ կը գիշի-
 րեն եղեր: Կրնա՞յ գտնուիլ հարուստ
 հայ մը որ հերքէ այս լուրերը, կամ
 թէ կրնա՞յ գտնուիլ հայ հարուստ մը,
 որ ճանչնալէ ընդունելէ ետքը մայր
 հայրենիքէն չհասած այս լուրերուն
 վաւերականութիւնը:

Գիշերը իր փետրալից անկողնին
 վրայ ճանգիտա՞քուն քնանայ առանց
 հաւածուելու կապոյտ փոքրիկ դիակ-
 ներու մղձաւանջէն: Իր հացալից սե-
 ղանին առջեւ անցնելով՝ որ կորստօ-
 րէն ուսէ իմէ՞ առանց աչքին առջեւ
 ունենալու մանկիկներու աղաղուն
 գաստակներ դողողօրէն դէպի սեղան
 կարկառուած:

Այս ոչ-որուն ու ցաւագին պատ-
 կերները կը ներկայացնեն մեր ար-
 տասանմանի հայ մեծատուններուն
 բարեացակամութեանը, մանաւանդ
 անոնց որ կուզեն ունէ եղանակով
 բարձր պահել հայութեան շարկը օ-
 տարին առջեւ, որ՝ երբ սեսնայ թէ
 մենք եկեղեցի՞ չի՞նք ատենին՝ մեր
 որբերը ալ անօթի ծարաւ չենք պը-
 տըսցնել: այլապէս դեղեցիկ գաղա-
 փար մը պիտի կազմէ մեր մասին:

Ո՞վ որ հակառակը կը պնդէ՝ թող
 համարձակի մատը վեր տանել:

ՇԱԻԱՐՇ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Թրքական փոստի վարչութիւնը շրջա-
 բերականով մը կը ծանուցանէ թէ
 այսուհետեւ զոյ նամակ չի պիտի ըն-
 դունի այլ ևս և Պոլիս զրկուելիք բո-
 յոր նամակները պէտք է բաց ըլլան:
 Այս հրամանը միայն թրքական քոս-
 տաներու համար է և ոչ միջազգային
 քոստաներու համար:

— Ռուսական դեսպանը ազդարար-
 րած է Բարձրագոյն Դրան թէ՛ մինչեւ
 յունուար 14 պէտք է անմիջապէս վը-
 ճարուին պատերազմական տուղանքէն
 350000 ոսկի:

Սայիտ փաշան հայոց պատրիարքին
 հետ տեղակցութիւն ունեցած միջո-
 ցին յայտարարած է թէ՛ խոսիւ հրա-
 մայած է հայկական դատուներու իշ-
 խանութեանց որպէսզի խաղաղու-
 թիւնը անվճար պահպանեն:

Սայիտ փաշայի եպարքոսութենէն
 ի վեր, Բարձ. Դրան ազդեցութիւնը
 սկսած է վերստին գործնալ: Սուլթա-
 նը ամոյսս Աին երկու ժամ խորհրդակ-
 ցեր է եպարքոսին հետ ինչ որ երկար
 ժամանակէ ի վեր տեսնուած չէր:
 Նոյն իսկ Սուլթանը եպարքոսին կու-
 ղարկէ եղեր Բ. Դրան եղած այն դի-
 մուհները որոնք ըստ նախկին սովո-
 րութեան Սուլթանին կուղուէին:
 Այս վիճակը սեծ գոհունակութիւն
 սկսեր է պտտնաւել կարգ մը անձե-
 րու որոնք ինքզինքնին շատ նեղուած
 կ'ըզային սլաւախին հետ գործ ունե-
 նալով:

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ս

Ֆիլիպիի մէջ պուլիարները հայե-
 րու հետ ընկերակցութեամբ հոգե-
 շանդիսա կատարել են, Էտիրնէի
 մէջ կախաղան բարձրացած հայ եւ
 պուլիար հերոսներու յիշատակին:

— Նախարարութիւնը հրաժարա-
 կան տուած է. սակայն դեռ յայտնի
 չէ թէ ո՞վ պիտի կոչուի գահալիճը
 կազմելու:

ՎԱՌՆԱՅԻ ՀԱՅ ՀԱՍՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ

Տեղւոյս Հ. Յ. Դաշնակցութեան
 կոմիթէն կը խնդրէ յայտարարել որ
 յատկապէս կ'ըրթակէ Ս. պատարագէն
 վերջ հոգեհանգիստ պիտի կատարուի
 Ատրիանուպոլսոյ մէջ կախուած
 Պեարոս Սէրէմճեանի Ռոտոսոցի Օն-
 նիկի եւ իրենց կուսի մէջ ընկած
 հայ եւ պուլիար ընկերներու յիշա-
 տակին:

Կերակի օր մասնաւոր յայտարար-
 ութիւններով պիտի հաղորդուին:

Ա Ջ Դ

Կը ծախուի 1896ին փետր. 2ին
 իշխան Պորիոի մկրտութեան առթի
 տպուած գործածուած նամակագրոջ մ
 ներ 1—5—15—25 սանդիմ:

Դիմել՝ ՍԵՍՐՈՊ ՄՈՒՐԱՏԵԱՆ
 Վառնա

Ա Ջ Դ

Որոհուողս կուգայ ներկայիւս
 յայտարարել որ տեղէ մը ուրիշ տեղ
 փոխադրուելու համար քաղաքէս անձ-
 նող աղգայինք իրենց ճանապարհա-
 ծախսը ամբողջովին չի հայթայթած
 խորհրդոյս օգնութեան վրայ յոյս
 դնելով ճամբայ շինեն: որովհետեւ
 այդպիսիներուն թաղական խորհուր-
 դրոս նիւթական օգնութիւն մը ընե-
 լու անկարող է: Հետեւաբար խոր-
 հուրոս նիւթական օգնութիւն մը
 յուսալով քաղաքս եկողները թափա-
 ռական և անոգնական պիտի մտնե-
 թ հարկէ ոտիպուած:

(ԿՆԻԳ)

ԳՈՐԾԱՐԱՆ

— 0 —

Լաթ ներկելու և քիմիա-
 պէս մտքործելու:

Վ. Յ Թ Օ Յ Ի Լ Օ Յ

ԵՒ

ԽՂ. Մ. ԿՕԻՕՅ

ՐՈՒՍՅՈՒՔ

Սոյն գործարանի մասնաճիւղը
 որուն կաւաւարիչն է Բէթօր
 ԿԼՈՒՇԳՕՅ Բոզքէստիկի խմ-
 րագիրը, քաղաքային պարտէ-
 ղին գիմայը:

Կը ներկէ կտանց և մանկա-
 կատ զգեստներ, մետաքսէ,
 բրդէ և բամբակէ գործուած ք-
 ներ, նոյնպէս վաճառականական
 ապրանքներ ու մանուածքներ:
 Ներկը չի թափել, միայն
 ներկելու տալիք նիւթերը մա-
 շած չ'ի պիտի ըլլան:

Գիները չափաւոր են:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ֆիլիպիի «Հայկական երգեցիկ
 խումբը» աս շրջանին մէջ վերս
 կսած ըլլալով արդէն իր պա-
 րտաւունքները, ձեռնարկած է
 նաեւ պարբերաբար հրատարա-
 կելու եւրոպական ձայնագրու-
 թեամբ հայկական հին եւ նոր
 քառաձայն երգեր, մաքուր թղ-
 թի վրայ, յստակ վիճագիր:

Այս առթիւ երգեցիկ խումբի
 վարչութիւնը ներկայիւս կը յայտ-
 նէ Պուլկարիոյ և արտասահմանի
 երաժշտասէր հայ երիտասարդու-
 թեան, որ եթէ ատ երգերէն
 փափագողներ կան, հաճին դի-
 մել վարք նշանակուած հասցէին՝
 վճարելով ու՛էկ թուղթին» հա-
 մար 20 սանթիմ. փոստի ծախսը
 մեր վրայ, Կան երգեր որոնք
 մէկէ աւելի թուղթերէ կը բաղ-
 կանան:

Արտասահմանի համար 35 սնթ.
 Ֆիլիպի վարչ. «Հայկ. երգե-
 ցիկ խումբի»:

Հասցէ՝ Agop Stadjian Philippopje

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան
 նամակ ուղարկելու եւ առհասարակ
 ամէն անակ դիմում ընելու համար
 պէտք է դիմել հետեւեալ հասցէով
 Իւնիոն Տէ Զ'էդիսիսակ Արև.
 Լ'Եօրոք Բիւ սը Լ'էֆօլ սը Շիկի 2

Սուխ Ժընիվ
 Կարգադիր Յանձնաժողով

ԽՂԲԼԿԻՈՒԹԻՒՆ 7 ԼՐԺՈՒՄ

Կը ապագրուին ամէն լեզու
 այցեատման, հասցեատման, նամա-
 կաղլուխ, հարստնեկան հրաւի-
 րագիր, մահապղ:

Գիները յոյժ դուրամատչելի:
 Աւելի քաղաքներէ եկած
 յանձնարարութիւններ ճշգու-
 թեամբ և փութով կը կատար-
 ուին:

ԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԵՆՈՒԿ

ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԳՆԵՐՈՒՆ

Անշուշտ մեր շր վճարող բաժա-
 նորդները, եթէ փոքր ինչ պար-
 տածանաչութեան զգացմունք
 ունին, կարողացին մեր նախորդ
 ազգերը որոնցմով կը յայտա-
 րարուէր թէ շր վճարող բաժա-
 նորդներու անունները պիտի
 յայտարարուի Շարժումի մէջ:
 Գանուցան բաժանորդներ որոնք
 շտապեցին իրենց պարտքը վը-
 ճարել. իսկ մէկ կարեւոր մասն
 ալ դեռ արձագանք չը տուաւ:
 Հիմա այդպիսիներուն կը յայ-
 տարարենք որ իրենց ժամանակ
 կը արուի մինչեւ դեկտ. 15ը:
 Մինչեւ այդ օրը պիտի սպա-
 ենք. ու այնուհետեւ իսկոյն
 պիտի հրատարակենք:

Ա Ջ Դ

Բաղէշի կուսակալութեան պատ-
 կանեալ Սուրբափ զիւղէն Պէկօ
 Ասատուրեանի, հաստատակալմ
 շէկ պէտով ու յօնքերով, 6 ա-
 միսէն շի վեր ուր լինելն անյայտ
 է զայն եթէ ճանաչողներ կան
 յանուն մարդասիրութեան թող
 իր այրի տիկին մայրը միտիթա-
 րել հաճին, անոր ուր գտնուիլը
 խմբագրութեանս հաղորդելով:

Отговорникъ:
 Мурадъ-Ераносянъ
 Печ. Взаимность — Варна